Գործ թիվ ԵԴ2/0816/02/26
Քաղվածք

ՎՃԻՌ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

10.03.2026թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ՝ Դատարան), հետևյալ կազմով՝

նախագահությամբ՝ դատավոր Դ. ՕՀԱՆՅԱՆԻ

գրավոր ընթացակարգով քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 09811047, պետական գրանցման համար՝ 88.110.01024, հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Տոլորս տուն 15) (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ ՀՀ քաղաքաշինության կոմիտե (ՀՎՀՀ՝ 02565827, պետական գրանցման համար՝ 273.184.1027110, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կառավարական շենք 3)՝ (Կազմակերպություն) և պատասխանող կողմում ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ՝ «Սեյսմշին» ՍՊԸ-ի՝ ՀՀ, (ՀՎՀՀ՝ 04227903, պետական գրանցման համար՝ 52.110.876275, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նոր նորք, 9 զանգված, շենք 73, 58)՝ ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-25/33 ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի 14.01.2026 թվականի թիվ 2-5 արձանագրությունը (որոշումը) անվավեր ճանաչելու և որպես հետևանք «ՀՈՒՍԱԼԻ ԿԱՄԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշում ընդունելուն պարտավորեցնելու պահանջի մասին,

ՎՃՌԵՑ

1. «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի, պատասխանող կողմում ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ՝ «Սեյսմշին» ՍՊԸ-ի՝ ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-25/33 ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի 14.01.2026 թվականի թիվ 2-5 արձանագրությունը (որոշումը) անավեր ճանաչելու և որպես հետևանք «Հուսալի Կամար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշում ընդունելուն պարտավորեցնելու պահանջի մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ Դ. ՕՀԱՆՅԱՆ

Ստորագրող
ԴԱՎԻԹ ՕՀԱՆՅԱՆ
2914920504

2026-03-19 10:19:43 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից